



Հանրապետական մանկավարժափոփոխության կենտրոն
Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների
դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	«Ներֆին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Առարկա՝	Աշխարհագրություն
Թեմա՝	Ուսուցման ժամանակակից մեթոդները և մոդելները որպես աշխարհագրության դասավանդման կարևորագույն գործիքներ:
Վերապատրաստող, մենթոր՝	Սեդրակյան Մարիամ
Ուսուցիչ՝	Գևորգյան Աշիսեն

Ներֆին Գետաշեն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Քվեատ մեթոդ

2. Ուսուցման ժամանակակից մեթոդները և մոդուլները որպես Աշխարհագրության դասավանդման կարևորագույն գործիքներ

3. Աշխարհագրության դասավանդման հիմնական մեթոդները

4. Աշխարհագրության ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը

5. Եզրակացություն

6. Օգտագործված գրականություն

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Աժխատանքի արդիականությունը: Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում են հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում: Ուսուցման հիմնախնդիրները միշտ էլ առաջնային և կարևոր են եղել հասարակության համար, ուստի զգալի պահանջներ են ներկայացվում նրանց, ովքեր դրանք պետք է լուծեն գործիմացորեն և վարպետությամբ: Նորօրյա մանկավարժությունը պետք է կարողանա հիշտ համադրել մեթոդներն ու հնարները:

Աժխատանքի նպատակը: Հետազոտական աժխատանքի նպատակն է վերլուծել աշխարհագրության դասաժամերին արդյունավետ հնարների կիրառման առանձնահատկությունները: Ուսուցման արդյունավետ հնարները նպաստում են ժամանակի տնտեսմանը, դասավանդողի և սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, տեսակետը արտահայտելու և հիմնավորելու հնարավորությանը: Աշխարհագրության դասաժամերին արդյունավետ հնարների կիրառումը ենթադրում կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություններ, որը դրսևում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի տարրեր՝ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասը անսովոր և ավելի հազեցած, հետաքրքիր: Կրթության համաաշխարհային փորձը և մեր կողմից կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ ՏՀՏ-ի ներդրումն իր հերթին կրթության ավանդական մեթոդների, հնարների ու տեխնոլոգիաների էական փոփոխության: Կրթարժանա ուսուցիչների անձնական պատասխանատվությանը՝ ի նպաստ սովորողների հանաչողական գործունեության ակտիվացմանը, քանի որ ՏՀՏ-ները լուրջ ներուժ են պարունակում այս գործընթացի արմատավորման համար:

1. ՔՎԵՍՏ ՄԵԹՈՂ

Աշխարհագրության ժամանակակից դասի անբաժանելի մասն է առակերտների ինֆորմացիոն գործնական գործունեությունը՝ հանաչողական և ստեղծագործական ուսումնասիրություններ խնդիրների ձևակերպման ուսուցում, խնդիրների լուծման ուղիների նախանշում և լուծում, սեփական դիրքորոշումների պաշտպանություն և հիմնավորում: Այս առումով՝ ֆեյս-մեթոդը, այսպես կոչված **case-study**-ն, հաջողությամբ է օգտագործվում: Քեյսն ունի մի քանի սահմանումներ. ֆեյսը իրական իրավիճակի նկարագրություն է, ֆեյսը իրականության ակնարկային պատկերն է, լինելիության, գոյության լուսանկարչություն է, ֆեյսը ոչ միայն երևույթի իրական նկարագրություն է, այլ նաև միասնական տեղեկատվական հավաքածու է, որը մեզ հնարավորություն է տալիս ծանոթանալ իրավիճակին: Քեյս-մեթոդը գործիք է, որը մեզ հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները կիրառել գործնական առաջադրանքներ կատարելիս: Մեթոդը զարգացնում է առակերտների ինֆորմացիոն մտածողությունը, ուրիշների կարծիքը լսելու և այլընտրանքային հայացքներ փոխանակելու, սեփական կարծիքը փաստարկված ներկայացնելու հմտություններ: Այս մեթոդի շնորհիվ առակերտները հնարավորություն ունեն ցուցադրել և զարգացնել վերլուծական և գնահատման կարողություններ, սովորել խմբով աշխատել, գտնել առաջադրված խնդիրների լուծման ուղիներ և հանաչողականներ:

Քեյս-մեթոդի հիմնական գործառույթն է առակերտներին սովորեցնել բարդ, ոչ կառուցվածքային խնդիրներ լուծել, որոնք չեն կարող լուծվել վերլուծական եղանակով: Քեյս-մեթոդն ակտիվացնում է առակերտներին, զարգացնում տեղեկատվական և հաղորդակցական կարողությունները: Այն հատկապես լավ է կիրառվում հասարակական աշխարհագրության հարցերն ուսումնասիրելիս, քանի որ այս ոլորտում անընդհատ թարմացվում է բովանդակությունը, ինչն առակերտներին հնարավորություն է տալիս իրավիճակի համեմատական վերլուծություն կատարել: Քեյսերի վրա աշխատելը ներառում է հետևյալ փուլերը. Տեղեկատվության բնագավառի ընկալում, խնդրի առաջադրում լուծման համար, խնդիրը հարուցող պատճառներին կողմնորոշված վերլուծություն, խնդրի լուծմանն ուղղված գաղափարների որոնում կամ գործողությունների պլանի մշակում:

Քեյսերով աշխատանքը դասին ընթանում է 3 փուլով.

1-ին՝ հանաչողական փուլ՝ անհատական նախապատրաստում: Այս փուլում աշակերտները ծանոթանում են ֆեյսին և ընդգրկվում են իրական իրավիճակի ֆննարկմանը: Փորձը ցույց է տալիս, որ այս դասին ամենալավը 1-3 էջանոց տպագիր ֆեյսի օգտագործումն է, որը հնարավոր է կարդալ 5-10 րոպեում:

2-րդ՝ հիմնական փուլ – աշխատանք փոքր խմբերում: Այս ժամանակ ձևավորվում են խնդրի լուծման տարբեր մոտեցումներ: Խմբի անդամները պետք է մշակեն ընդհանուր կարծիք, որին կարող են կցված լինել սխեմաներ, թեզիսներ: Պետք է նշել, որ ընդհանուր կարծիք մշակելը ուսուցչի համար ինֆնանցատակ չէ, պարզապես ցանկալի է: Բայց յուրաքանչյուր աշակերտ կարող է ունենալ իր սեփական, տարբեր կարծիք և այն արտահայտել ֆննարկման ընթացքում երրորդ փուլում: **case-study** մեթոդը սովյալ իրավիճակում հավաքական ուսուցման մեթոդի դերում է, որի կարևոր մասն է հենց խմբերում աշխատելը և տեղեկատվություն փոխանակելը :Խմբային գործունեության մթերքները ֆննարկման հարց են: Խմբային գործունեության մթերքները ֆննարկման հարց են: Կարևոր է ֆեյսի առաջադրանքի վերաբերյալ միասնական կարծիք մշակելը:

3-րդ փուլ՝ խմբի հեղինակային մթերքի շնորհանդես՝ ուղեկցող ֆննարկմամբ:

Յուրաքանչյուր խումբ հակիրճ և հստակ ներկայացնում է խնդրի լուծման իր տարբերակը: Խմբային շնորհանդեսին պետք է տրամադրվի 3 րոպե: Այնուհետև սկսվում է ֆննարկումը խմբերի միջև, որով ավարտվում է կոնկրետ իրավիճակի վրա աշխատանքը, և միևնույն ժամանակ այն ունի մեծ զարգացնող ներուժ: Քննարկումից հետո ուսուցիչն արտահայտում է իր կարծիքը, սակայն, չի վիճարկում, որ այն միակն է և ճիշտը, դրանով իսկ ընդգծելով այն հանգամանքը, որ ինքը և աշակերտները գործընկերներ են: Նույն փուլում պետք է գնահատվեն աշակերտների աշխատանքները: Օրինակի համար ֆննարկենք «Հայաստանի զբոսաբերական-հանգստյան ռեսուրսները և զբոսաբեռնության զարգացումը» թեման: Դասի ժամանակ ֆեյսերի միջոցով ֆննարկվում է զբոսաբեռնության-հանգստյան ռեսուրսների ներուժը, որովում են Հայաստանում զբոսաբեռնության զարգացման խնդրի պատճառներն ու լուծման ուղիները: Այս ֆեյսը

գործողության արդյունավետ տարբերակները հասկանալու համար միաժամանակ պետք է կատարի տեխնիկական առաջադրանքի և տեղեկատվության աղբյուրի գործառույթ:

2.ՈւՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄՈՂՈՒՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գործնականում համակարգչային են համարվում ուսուցման այն բոլոր տեխնոլոգիաները, որոնց իրացումն ապահովվում է տեխնիկական տեղեկատվական միջոցներով: Այս համատեքստում, երբ համակարգիչները մուտք գործեցին կրթական տարածք, սկիզբ առավ «ուսուցման նորարարական տեղեկատվական տեխնոլոգիա» եզրույթը: Հարկ է նշել, որ տրամաբանորեն յուրաքանչյուր մանկավարժական տեխնոլոգիա կարելի է համարել տեղեկատվական, քանի որ մանկավարժական ժամանակակից գործընթացն անհնար է պատկերացնել առանց տեղեկատվության առատության, իսկ ուսուցման գործընթացի տեխնոլոգիական հիմքն է կազմում տեղեկատվական շարժը կամ նրա ճկուն փոխակերպումը: Ուստի ուսուցման յուրաքանչյուր տեխնոլոգիա, որտեղ ակտիվորեն կիրառվում է համակարգիչն ու այլ թվային տեխնիկա, կարելի է անվանել համակարգչային տեխնոլոգիա:

Ասվածից կարելի է գրահասցնել, որ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ուսուցման գործընթացը ենթադրում է սովորողների և համակարգչային տեխնիկայի միջև սերտ շփում, հարմարվողականության սկզբունքի վրա հիմնված փոխադարձ հարմարում, ինչը պայմանավորվում է սովորողի կողմից համակարգչային տեխնիկայի գործածմամբ առանձնահատկություններում: Ակնհայտ է, որ ուսուցման այս եղանակը կրում է երկխոսական բնույթ այն, չնայած ճկուն և համակարգված բնույթի, ամեն վայրկյան ուսուցչի կողմից ուղղորդման կարիք ունի, հետևաբար կարավառելի է:

Աշխարհագրության դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով է ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ և անսահմանափակ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից աշխարհագրական լայնածավալ տեղեկատվության դյուրին յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակները ու յուրահատկությունները, առանձնացվում են համակարգչային ծրագրերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝

- վարժանախոսի ծրագրերը
- ցուցադրական ծրագրերը
- ուսուցողական ծրագրերը
- սեղեկատվական ծրագրերը
- մոդելավորում ծրագրերը
- մուլտիմեդիա ծրագրերը

Օգտագործելով ցուցադրական ծրագրերի կիրառման հնարավորությունները՝ և՛ ուսուցիչները՝ նոր նյութի մոտեցման անբողջ ընթացքում, և՛ սովորողները՝ ուսուցչի կողմից իրացվող հարցման ժամանակ կարող են իրենց խոսքը ուղեկցել սահիկահանդեսների ցուցադրմամբ, որոնք կազմվում են համակարգչային **Power Point** ծրագրով: Փորձը ցույց է տվել, որ այս ծրագրերի նպատակային օգտագործումն աշխարհագրության դասագործընթացում բույլ է տալիս նաև զգալիորեն կրճատել անհրաժեշտ սեղեկատվությունը կամ ուսումնական նյութի որոնման ժամանակահատվածը, ինչ արդյունքում արձանագրվում է ուսուցանվող նյութի արագ համալրման ու անձնակենտրոն կրթական գործընթացի կառուցում, որի արդյունքում կարավառվում են սովորողների ընկալման տարաբնույթ իրավիճակներ:

Աշխարհագրության դասընթացը հետաքրքիր դարձնելու համար կարելի է օգտվել էլեկտրոնային կրթական պաշարների շտեմարանից, տրամադրել պատկերներ, լուսանկարներ, ռելիեֆի եռաչափ մոդելներ և այլն, համակարգչային ծրագրային այլ վիթերներում ձևավորելու և օգտագործելու համար, որոնց օգնությամբ սովորողները կարող են մոդելավորել երևույթները, կազմել ֆարսեզ- գծապատկերներ, կառուցել պրոֆիլներ:

3. Աշխարհագրության դասավանդման հիմնական մեթոդները

Ուսուցման մեթոդները - դրանք փոխկապակցված գործունեության եղանակներ են ուսուցիչների և աշակերտների, որոնք ուղղված են սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման

նպատակներին:

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինֆրանպատակ, կամայական լինել: Շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը:

Մեթոդն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Սովորողները պետք է հստակ իմանան՝ ինչ են իրենցից ակնկալում, պետք է վստահ լինեն, որ ուսուցիչն աջակցելու, օգնելու է իրենց:

Այստեղ կարևոր է նեղ խմբային աշխատանք, որն ուղղված է աշակերտների թիմում ստեղծագործ աշխատելու կարողությունների զարգացմանը: Աշակերտները հայտնվում են տարբեր ուսումնական իրավիճակներում, հանդիպում են դժվարությունների, հաղթահարում դրանք ինչպես ինտուիտիվ, այնպես էլ նոր գիտելիքների միջոցով, որոնք պետք է ինֆուրայն ձեռք բերվեն անհատական նպատակին հասնելու համար, որը կազմի ամբողջ խմբի աշխատանքի արդյունքի վրա: Անհնար է հաշվի չառնել այն վստաք, որ շատ հաճախ աշակերտները կորցնում են սովորելու մոտիվացիան և նոր գիտելիքներ ձեռք բերելու հետաքրքրությունը: Հենց սա է թույլ տալիս երեխաներին ձևավորել միայնակ հետ համագործակցելու, խնդիրների լուծման ընդհանուր ռազմավարություն մշակելու, պարտականությունները բաշխելու և փոխադարձ օգնություն ցուցաբերելու կարողություն:

Աշակերտների համար գիտելիքի աղբյուր կարող են լինել ուսուցչի կենդանի խոսքը, դասագիրքը, աշխարհագրական քարտեզը, լրացուցիչ գրականությունը, տեսողական նյութերը, թվային նյութերը, գործնական աշխատանքը, դիտարկումները, փորձերը: Այս մեթոդները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ տեսողական, գործնական, բանավոր:

Նաև ընդունված է առանձնացնել ուսումնասիրության հետևյալ մեթոդները՝ բացատրական-պատկերավոր, վերաբաղադրողական մեթոդ, խնդրի ներկայացում, մասնակի որոնում, հետազոտություն:

Բացատրական-պատկերավոր-Մեթոդի նպատակը կազմակերպել դպրոցական գիտելիքների և սովյալների ձուլումը պատրաստի եղանակով: Ուսուցիչը ներկայացնում է ուսումնական նյութը՝ օգտագործելով աշխարհագրական քարտեզներ, տարբեր տեսողական միջոցներ: Շեշտը դրվում է հիմնական նյութի վրա, բացառելով երկրորդական տեղեկություններով ծանրաբեռնվածությունը: Աշակերտի առաջադրանքն է ընկալել նոր տեղեկատվությունը, հիշել և վերարտադրել այն: Ամեն դեպքում, աշակերտները ստանում են գիտելիքներ պատրաստի տեսքով, առաջադրանքները լուրջ մտավոր դժվարություններ չեն առաջացնում:

Վերարտադրողական մեթոդ-Դրա նպատակն է սովորեցնել աշակերտին կիրառել գիտելիքներ և հմտություններ ծանոթ իրավիճակում ըստ հայտնի օրինաչափության: Ուսուցիչը կազմակերպում է աշակերտների ինֆորմուլյն աշխատանքը, նրանց տալիս է ստանդարտ առաջադրանքներ և ծանոթացնում դրանց կատարման եղանակի հետ: Աշակերտները կատարում են առաջադրանքը անբողջ դասարանով ուսուցչի ղեկավարությամբ: Հետո տրվում է նմանատիպ առաջադրանքներ ինֆորմուլյն աշխատանքի համար: Նման աշխատանքի հիմնական տեսակն է նկարագրություններ աշխարհագրական քարտեզների վրա: Տրվում են նաև առաջադրանքներ՝ բացահայտելու պատճառահետևանքային հարաբերությունները, համեմատություններ անելու համար: Ամեն դեպքում, աշակերտին հայտնի է առաջադրանքների կատարման եղանակը, չի փնտրում նոր միջոց: Հետևաբար, նրանց գործունեությունը վերարտադրողական է, այսինքն. նրանց հիմնավորման տրամաբանությունը որոշվում է ստանդարտ պլանով, հրահանգներով:

Խնդրի ներկայացման մեթոդ- Դրա նպատակն է ցույց տալ աշակերտներին օրինակելի լուծումը խնդիրների, նրանց համար բացահայտելու դեպի հեմարտություն շարժվելու բարդ ուղին⁷: Ուսուցիչը ձևակերպում է խնդիրը, և համոզիչ կերպով լուծում է այն: Աշակերտների գործունեությունն է, որ նրանք պետք է ընկալեն, ըմբռնեն նյութը, հետևեն ապացույցի տրամաբանությանը, սովորեն խնդիրների լուծման փայլերը:

Մասնակի որոնման մեթոդ- Դրա նպատակն է աստիճանաբար ծանոթացնել աշակերտներին ստեղծագործական գործունեության հետ: Սա ձեռք է բերվում խնդիրների լուծման միջոցով: Այս մեթոդը

կոչվում է նաև ստեղծագործական մեթոդ: Մասնակի որոնման մեթոդով ուսուցիչը դնում է հիմնական խնդիրը և այն բաժանում մի քանի ենթահարցերի, ենթահարցերի պատասխանները հանգեցնում են հիմնական հարցի պատասխանին: Միևնույն ժամանակ աշակերտները որոնողական աշխատանքներ են իրականացնում, բայց ոչ ամբողջովին ինֆնուրույն, քանի որ նրանց յուրաքանչյուր քայլ ուղղորդվում է ուսուցչի կողմից ենթահարցերի միջոցով:

Հետազոտության մեթոդ - Դրա նպատակն է ծանոթացնել աշակերտին ինֆնուրույն ստեղծագործական գործունեության: Եթե նախորդ մեթոդի դեպքում ուսուցչի օգնությամբ են փնտրում հարցի պատասխանը, ապա այս մեթոդի դեպքում ինֆնուրույն են կատարում առաջադրանքները: Աշակերտները հավաքում են փաստացի նյութ, մշակում, համակարգում այն, վերլուծում, եզրակացություններ անում, հիմնավորում դրանք: Նման առաջադրանքների իրականացումը հնարավորություն է տալիս ստանալ նոր գիտելիքներ:

Հստ դասավանդման մեթոդների առանձնանում են գիտելիքների յուրացման հետևյալ աստիճանները աշակերտների կողմից.

4. Աշխարհագրության ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառումը

Աշխարհագրության դասերին դասապրոցեսը կարելի է բաժանել հետևյալ փուլերի՝

Դասապրոցեսի անցկացման փուլերը

Խթանման փուլի մեթոդներից անբաղաձեռն մտադրանքի և պրիզմայի մեթոդներին: Մտադրանք մեթոդ՝ Դասի խթանման պարզագույն և շատ արդյունավետ մեթոդներից, որի գլխավոր գործառնությունը մտքերի գեներեցիան է: Աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է սեփական տեսակետները առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա: Նաև կոչվում է մտքերի տարափ մեթոդ: Այս մեթոդը կիրառելիս սխալ մտքեր ու գաղափարներ չկան, բոլոր արտահայտված մտքերն ու գաղափարներն ընդունելի են: Մեթոդը նպաստում է նոր գաղափարներ ի հայտ գալուն:

Պրիզմա մեթոդ

Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ուղորտում եղած ասոցիատիվ կապերի վերահսկումն ու արձանագրումն է¹¹: Տրվում է մեկնաբանը՝ այն հիմնական հասկացությունը, որը ենթակա է ուսումնասիրության: Հաջորդ վանդակներում լրացվում են մեկնաբանի ազդեցությամբ մտքում ծագած առաջի երկու պատահական բառերը: Եվ այսպես մինչև վերջ: Պրիզման եզրափակվում է վերջնաբառով: Ամփոփիչ ֆայլը մեկնաբանի և վերջնաբանի միջև սրամաբանական կապ գտնելն է, որն իր արտացոլումն պետք է գտնի մեկ մտքի մեջ:

Կռուդատման փուլի մեթոդներից են՝ ֆառաբաժանը, գաղափարների ֆարտեզագրումը:

Գաղափարների ֆարտեզագրում

Մեթոդը մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է: Օգնում է սովորողներին շատ բաներ տարբեր տեսանկյուններից հասկանալու, մտածողության տարբեր ձևեր օգտագործելու: Հասկացությունների ֆարտեզ կազմելու համար անհրաժեշտ է գլխավոր, առանցքային միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան ձևով: Կապակցված գաղափարները պետք է գրել կենտրոնական մտքից ճառագայթող ճյուղերին, բոլոր արտահայտությունները գծերով միացնել կենտրոնին կամ ճյուղերին՝ ըստ դրանց միմյանցից կախված լինելու հանգամանքի: Գաղափարների ֆարտեզագրումն իր կառուցվածքով զարկ է տալիս գաղափարների ներդաշնակեցմանն ու նոր գաղափարների կերտմանը: Իմաստի ընկալման մեթոդներից են՝ խեանկարը, T-աձև, M-աձև աղյուսակները:

T-աձև աղյուսակի մեթոդ

Այս մեթոդը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր սրակները՝ դրական և

բացասական կողմերը: Այս մեթոդը հարմար է ֆննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխաններ կամ հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր

Բացասական կողմեր

M-աձև աղյուսակի մեթոդ

Այս մեթոդը T-աձև աղյուսակի ավելի ճիշտ տարբերակ է, որը միևնույն հասկացության վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք արտահայտելու հարմար միջոց է¹³: Սա նույնպես կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Աղյուսակը կազմված է երեք մասից, որտեղ միևնույն հասկացության վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումն է գրանցվում, նաև բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է ֆննարկումների ժամանակ երեք տարբեր պատասխանների կամ համադրություն/հակադրություն/չեզոք վերաբերմունք արտահայտող արձագանքների գրառման համար:

Դրական կողմեր

Չեզոք կողմեր

Բացասական կողմեր

Խճանկար մեթոդ

«Խճանկար» անվանումը բնութագրում է մեթոդը: Առակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի և սովորեցնողի դերերում: Խճանկարի փուլերն են՝

Խճանկար մեթոդի փուլերը

Առաջին փուլում առակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են թեմաները, հավաքում տեղեկատվություն: Երկրորդ փուլում առակերտները համեմատում և հարստացնում են իրենց նյութերը: Մյուս փուլում յուրաքանչյուր փորձագետ խմբի մնացած անդամներին սովորեցնում է իր ենթաթեման: Ավարտական աշխատանք փուլում առակերտները ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:

Ամփոփում փուլում արդյունքներն ամփոփում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների: Խճանկար մեթոդի տարատեսակներից է շրջագայություն պատկերասրահում: Այս մեթոդը համարվում է աշխարհագրության դասավանդման առավել արդյունավետ մեթոդներից մեկը: Շրջագայություն պատկերասրահում մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, զարգացնել լսելու, ինֆնուրույն աշխատելու, ֆննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Ներկայացնենք ընթացքը. ուսուցիչն առաջադրանքը բաժանում է 4-6 մասիև յուրաքանչյուր խմբի տալիս դրանցից մեկը ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից, այդ դեպքում նյութի նույն մասն կուսումնասիրի երկու խումբ: Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում նկար, դիագրամ, աղյուսակ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին ստեղծելով պատկերասրահ: Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչև 4-ը, կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների: Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ: Տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից ֆննության են ենթարկվում այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը: Նշենք նաև կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերն կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրները: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս աշխատանքների հետ աշակերտները հետադարձ կապ են ապահովում: Բարձր դասարաններում նպատակահարմար է խմբերին առաջադրել թեմայի տարբեր մասեր:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

<p>Թեև՝ Երկրի տարեկան պտույտը և դրա հետևանքները՝ Նպատակը՝</p>	<p>Աշակերտները դասի վերջում պետք է խմանան տարվա և եղանակների առաջացման պատճառները, որ դիրքում հյուսիսային և հարավային կիսագնդում տարվա ինչ եղանակ է և ինչպես ենք հաշվում անկման անկյան մեծությունը</p>
<p>Բանալի հասկացություններ, անուններ</p>	<p>Տարեկան պտույտ, ուղեծիր, երկարությունը, մերձակետ, հեռակետ, ամառային արևակայություն, ձմեռային արևակայություն, գարնանային և աշնանային գիշերահավասար</p>
<p>Դիզակտիկ նյութեր, պարագաներ</p>	<p>Պաստառ, աշխարհի քարտեզ</p>
<p>Նախապատրաստական աշխատանքներ</p>	<p>Սեղանները պատրաստել խմբերի համար, պատրաստել հարցեր կաշուն թղթերի վրա, բաժանել ստանդարտ թերթիկներ յուրաքանչյուր խմբի համար</p>
<p>Աշակերտի գիտելիքները ստուգելու համար հանձնարարվող առաջադրանքները</p>	<p>Բաժանել Ա4 ֆորմատի թղթերը, որի վրա գրել խմբի անունը (գարուն, ամառ, աշուն, ձմեռ), եղանակին համապատասխան գույնի թերթիկների վրա գրել հարցեր ամփոփման համար:</p> <ol style="list-style-type: none"> 1. Այդ ժամանակ որ գուգի վրա է արևը: 2. Բևեռների շրջանում ինչ է՝ գիշեր, թե ցերեկ: 3. Որ բևեռ է ուղղված դեպի արեգակը:
<p>Խթանման փուլ</p>	
<p>Դասի սկիզբ (5ր.) Ուսուցչի գործունեություն</p>	<p>Ինչ պտույտի հետ ենք ծանոթացել, երկիր մալդրակի տեղը արեգակնային համակարգում, ինչի շնորհիվ է երկիրը մնում ուղեծրում</p>
<p>Իմաստի ընկալում</p>	
<p>ա) նոր նյութի մատուցում 15ր. բ) ուղղորդված աշխատանք (հարցերով ամրապնդում, գործնական աշխատանք և այլն)</p>	<p>Արեգակի շուրջ երկրի պտույտի ուղղությունը, ժամանակը: Ինչ է արևադարձը և ինչ է բևեռային շրջագիծը: Արևը երբ է հասարակածի վրա: Յուրաքանչյուր խումբ պետք է բացատրի հս. կիսագնդի ամառային, ձմեռային, գարնանային, աշնանային դիրքը և ներկայացնի:</p>
<p>Կտարադատում</p>	

ա) անհատական ստուգում (հարցերով, հարցաթերթիկներով կամ խաղերի միջոցով)	Խմբերին բաժանել կաշուն թերթիկների վրա գրված հարցերը, նրանք պետք է պատասխանեն հարցերով:
բ) ամփոփում բանավոր հակառային հարցեր ուղղելով	Թույլ աշակերտներին, որոնք պատիվ էին, ուղղե մի քանի հետաքրքիր հարցեր:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Թեմա՝ Մշակույթ արդյունաբերություն	Աշակերտները դասի վերջում պետք է իմանան տարվա և եղանակների առաջացման պատճառները, որ դիրքում հյուսիսային և հարավային կիսագնդում տարվա ինչ եղանակ է և ինչպես ենք հաշվում անկման անկյան մեծությունը
Բանալի հասկացություններ, անուններ	Տարեկան պտույտ, ուղեծիր, երկարությունը, մերձակետ, հեռակետ, ամառային արևակայություն, ձմեռային արևակայություն, գարնանային և աշնանային գիշերահավասար
Դիպակտիկ նյութեր, պարագաներ	Պաստառ, աշխարհի քարտեզ
Նախապատրաստական աշխատանքներ	Սեղանները պատրաստել խմբերի համար, պատրաստել հարցեր կաշուն թղթերի վրա, բաժանել ստանդարտ թերթիկներ յուրաքանչյուր խմբի համար
Աշակերտի գիտելիքները ստուգելու համար հանձնարարվող առաջադրանքները	Բաժանել Ա4 ֆորմատի թղթերը, որի վրա գրել խմբի անունը (գարուն, ամառ, աշուն, ձմեռ), եղանակին համապատասխան գույնի թերթիկների վրա գրել հարցեր ամփոփման համար: 1. Այդ ժամանակ որ գույնի վրա է արևը: 2. Բևեռների շրջանում ինչ է՝ գիշեր, թե ցերեկ: 3. Որ բևեռ է ուղղված դեպի արեգակը:
Խրանման փուլ (5 րոպե)	
ա) Մտազրույց մեթոդ	Մտազրույցի մեթոդի միջոցով կրկնում են տևտեսության հյուղերը, դրանց տեղաբաշխման գործոնները:

բ) Պրիզմայի մեթոդ	Պրիզմայի մեթոդի միջոցով գծում ենք արդյունաբերության նյութերը, որպես արտադրական ոլորտի նյութեր և հանգում ենք նրան, որ արդյունքում ստանում ենք նյութական բարիքներ:
Իմաստի ընկալում	
<p>ա) նոր նյութի մատուցում 15ր.</p> <p>բ) ուղղորդված աշխատանք (հարցերով անրապնդում, գործնական աշխատանք և այլն)</p>	<p>Հնդհանուր ներկայացնելու են արդյունաբերության արդյունահանող և մշակող նյութերը: Մշակող արդյունաբերության նյութերը համառոտ նկարագրելու են:</p> <p>Դասարանը բաժանելու են 5 խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարելու են պատասխանել հետևյալ հարցերին. ո՞րն է սրված նյութի առանձնահատկությունը և ինչպես է տեղաբաշխվում: Խմբի անդամները Քեյսի մեթոդով մշակում են իրենց մոտեցումները, կարծիքները: Տրվում է իրավիճակային հարց. ո՞ր նյութը կարելի է զարգացնել ՀՀ-ում: Կարծիքների փոխանակումից հետո խմբերը ներկայացնում են խնդրի լուծման իրենց տարբերակները: Խմբերը գալիս են մ եզրակացության: Վերջում ուսուցիչը հայտնում է իր կարծիքը, բայց չի պարտադրվում, որ դա ընդունվի և իրեն համարում է աշակերտների գործընկերը: Գնահատվում են աշակերտների կարծիքները (10 րոպե):</p>
Կշռադատում	
<p>ա) անհատական ստուգում (հարցերով, հարցաթերթիկներով կամ խաղերի միջոցով)</p> <p>բ) ամփոփում բանավոր հակատային հարցեր ուղղելով</p>	<p>Յուրաքանչյուր աշակերտ թերթիկի վրա լրացնում է արդյունաբերության 5 նյութերի համառոտ բնութագիրը, և հարցադրում է կատարվում, թե ո՞ր նյութն է տեսնում ՀՀ-ի համար հեռանկարային:</p> <p>Ուսուցիչը հավաքում է թերթիկները և գնահատում (7 րոպե):</p>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս բոլոր մեթոդները ուսումնասիրելիս ես հանգեցի մի շարք եզրակացությունների: Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով: Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել, այլ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակային ընտրությունը: Կարևոր է, որպեսզի ավանդական մեթոդներին զուգահեռ կարողանանք կիրառել նաև ժամանակակից մեթոդներ: Վերջիններս ավելի արդյունավետ կդարձնեն դասադրոցեսի իրականացումը, ինչպես նաև ավելի հետաքրքիր կդարձնեն դասը:

Դասադրոցեսը կարելի է բաժանել խթանման, իմաստի ընկալման և կռադատման փուլերի: Յուրաքանչյուր փուլի ընթացքում պետք է կիրառել արդյունավետ մեթոդ:

Ներկայացնում եմ իմ անցկացրած դասերից մեկի պլանը, որի ժամանակ օգտագործել եմ վերը նշված մեթոդները:

Դասի թեման՝ երկրի տարեկան պտույտը և դրա հետևանքները:

Խթանման փուլում օգտագործել եմ բացատրական պատկերավոր, վերարտադրության, մասնակի որոնման, հետազոտական մեթոդները: Կռադատման փուլում կիրառել եմ կռադատման, զբոսաբերությունը պատկերասրահում մեթոդները: Նաև աշակերտները պատասխանել են կաշուն թերթիկների վրա դրված հարցերին և՛ նախորդ դասի վերաբերյալ, և՛ նոր դասի վերաբերյալ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Հ., Դավի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական ուսուցիչների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014:
2. Խաչատրյան Ա., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
3. Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան, Աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ, Երևան, Աստղիկ գրատուն, 2013:
4. Ջեյմս Ֆ. Սիլվեր, Աշխարհագրություն, Մեթոդական նյութեր ուսուցիչների համար: Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն:
5. Աստվածատրյան Մ.Գ. և ուրիշներ, Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, «Աստղիկ» հրատ., 2004-232 էջ: